Երկրորդ ընթերցում

(Լրամշակված նախագիծ)

Կ-901-16.08.2024-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետից հանել «և կենդանիների» բառերը.

2) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«25) պեստիցիդ՝ բույսերի պաշտպանության միջոց, ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է բույսերի հիվանդությունների, որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, չվերամշակված գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերամշակման, փոխադրման, իրացման գործընթացները խոչընդոտող վնասատուների), բույսերի և սնկերի անցանկալի տեսակների տարածման ու զարգացման կանխարգելման կամ ոչնչացման համար: Պեստիցիդների հիմնական խմբերից են՝ միջատասպանները (ինսեկտիցիդներ), տզասպանները (ակարիցիդներ), կրծողասպանները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մանրէասպանները (բակտերիոցիդներ), նեմատոդասպանները (նեմատոցիդներ), մոլախոտասպանները (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, բույսերի պատվաստանյութերը, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները, ֆումիգանտները.».

3) 28-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և 38-րդ կետերը.

«29) **ազդող նյութ՝** պեստիցիդի պատրաստուկային ձևի մեջ առկա կենսաբանորեն ակտիվ բաղադրիչ, որն ապահովում է պեստիցիդի նպատակային օգտագործման արդյունավետությունը.

30) **Ֆերոմոն՝** կենդանի օրգանիզմների ներզատիչ և արտազատիչ գեղձերի գործունեության արգասիք հանդիսացող բուրավետ նյութերի անալոգ սինթետիկ քիմիական պատրաստուկ, որը հանդիսանում է պեստիցիդ և կիրառվում է վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, դրանց տարածումը, զարգացումը կանխարգելելու, նվազեցնելու, ինչպես նաև վնասակար օրգանիզմների զարգացմանը, թռիչքի շարժին հետևելու և դրանց դեմ միջատասպանների կիրառման ժամկետները որոշելու համար: Ֆերոմոնները վնասակար օրգանիզմների կենսաքիմիական պրոցեսների վրա ազդելու փոխարեն խաթարում են վերջիններիս զուգավորման բնական ցիկլը.

31) **դեֆոլիանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որը բույսերի մոտ առաջացնում է արհեստական տերևաթափ: Որոշակի չափաքանակով կիրառման դեպքում բույսերի կենսունակությունը դրանից չի նվազում և գյուղատնտեսության մեջ օգտագործվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով.

32) **դեսիկանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որն արագացնում է մշակաբույսերի հասունացումը, չորացումը, կիրառվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով.

33) **ֆումիգանտ՝** պեստիցիդ հանդիսացող գազային վիճակով քիմիական նյութ, որը կիրառվում է վնասակար օրգանիզմների (միջատների) դեմ պայքար իրականացնելու համար, որը վերջիններիս օրգանիզմ է թափանցում շնչուղիների միջոցով.

34) **վարակազերծում՝** բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների նկատմամբ իրականացվող գործողությունների համալիր, որն ուղղված է կարանտին վնասակար օրգանիզմների ոչնչացմանը.

35) **արտադրող**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրացման նպատակով իրականացնում է բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների, ինչպես նաև պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն.

36) **արտադրական տարածք**՝ արտադրամաս, որտեղ անմիջապես արտադրողի կողմից կամ արտադրողի պատվերով և վերջինիս կողմից սահմանված համապատասխան բաղադրությամբ իրականացվում է պեստիցիդների կամ ագրոքիմիկատների արտադրություն.

37) **առևտրային անվանում**՝ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանում, որի ներքո պեստիցիդը կամ ագրոքիմիկատը մակնշվում է, գրանցվում, գովազդվում և օգտագործվում է տվյալ արտադրանքը նույնատիպ ազդող նյութ կամ սննդատարր պարունակող այլ պեստիցիդներից կամ ագրոքիմիկատներից տարբերվող դարձնելու նպատակով.

38) **քաղաքականություն մշակող լիազոր մարմին՝** բուսասանիտարիայի ոլորտում քաղաքականություն մշակող պետական կառավարման համակարգի մարմին:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետից, 6-րդ հոդվածի 1-ին մասից, 7-րդ հոդվածի 2-րդ մասից, 9-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետից, 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «կամ հատուկ» բառերը:

Հոդված 3. Օրենքի՝

1) 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 13-րդ հոդվածի 3-րդ մասում, 14-րդ հոդվածի 1-ին մասում, 16-րդ հոդվածի 6-րդ մասում, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերություններում, 6-րդ գլխի վերնագրում, 18-րդ հոդվածի վերնագրում և 2-րդ, 3-րդ մասերում՝ «կարգավորվող այլ առարկաների» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաների» բառերով.

2) 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 9-րդ կետերում, 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերում և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «կարգավորվող առարկաների» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաների» բառերով.

3) 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում՝ «, կարգավորվող առարկաներն» և 23-րդ կետում՝ «, կարգավորվող առարկա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «և այլ կարգավորվող առարկաներն» և «և այլ կարգավորվող առարկա» բառերով.

4) 13-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «, կարգավորվող առարկաներ» բառերը փոխարինել «և այլ կարգավորվող առարկաներ» բառերով,

5) 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «կարգավորվող այլ առարկաներն» բառերը փոխարինել «և այլ կարգավորվող առարկաներն» բառերով.

6) 18-րդ հոդվածի 1-ին մասում «կարգավորվող այլ առարկաները» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածում

1) 1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ կետով՝

«8.2) բուսաբուծության ոլորտում աշխատանքի անվտանգության կանոնների հաստատումը.»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 6. Պեստիցիդների պետական գրանցումը և վերագրանցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող պեստիցիդները պարտադիր ենթակա են պետական գրանցման (այսուհետ՝ գրանցում), բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների:

2. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Կառավարությունը սահմանում է պեստիցիդների պարզեցված ընթացակարգով գրանցման իրականացման դեպքերը:

3. Պեստիցիդների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը պեստիցիդների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են 10 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Պեստիցիդների գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը՝

1) պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, համագործիչ և օժանդակ նյութերը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) պեստիցիդի ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը, մշակումների քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) պեստիցիդի հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը, ջրամբարների ջրում

թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում).

4) պեստիցիդի քիմիական փորձաքննության, ազդող նյութի մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների՝ ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը), եթե տվյալ նյութի փորձաքննության մեթոդիկաներով բյուրեղային տիպօրինակն անհրաժեշտ է.

5) պեստիցիդի թունունակությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն).

6) պեստիցիդի ազդեցությունը վերարտադրողականության վրա.

7) պեստիցիդի մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ, տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները.

8) պեստիցիդի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը.

9) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի պիտակի նկարագիրը.

10) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում դրանց երկու տարվա անընդմեջ դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին, որը տրամադրվում է քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտով սահմանված գիտական և կրթական կազմակերպությունների կողմից՝ քաղաքականություն մշակող լիազոր մարմնի հաստատած ձևին համապատասխան:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում .

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-4-րդ և 9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կայացնում է տվյալ պեստիցիդը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով տեղեկացնում է հայտատուին:

9. Լիազոր մարմնի կողմից պեստիցիդների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում պեստիցիդների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժվում է, եթե՝

1) պեստիցիդի ազդող նյութը կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները.

3) պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի:

10. Պեստիցիդի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Պեստիցիդները ենթակա են վերագրանցման, եթե մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել և պեստիցիդի ազդող, համագործիչ, օժանդակ նյութերի բաղադրությունը և դրանց տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել: Պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր

ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին պեստիցիդը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին և 6.2-րդ հոդվածներով.

«Հոդված 6.1. Ագրոքիմիկատների պետական գրանցումը և վերագրանցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են գրանցման, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված ագրոքիմիկատների:

2. Հայաստանի Հանրապետությունում ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Կառավարությունը սահմանում է ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման իրականացման դեպքերը:

3. Ագրոքիմիկատների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը ագրոքիմիկատների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 10

աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են 10 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ագրոքիմիկատների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

1) ագրոքիմիկատի՝ առևտրային անվանումը, սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) ագրոքիմիկատի կիրառման եղանակները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային քանակը.

4) ագրոքիմիկատի սննդատարրերի քիմիական փորձաքննության մեթոդիկան.

5) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի.

6) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և գործածության մեջ գտնվող ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում.

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա) սույն հոդվածի 6-րդ մասի 1-3-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ) գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կայացնում է տվյալ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում պատշաճ կերպով տեղեկացվում է հայտատուին:

9. Լիազոր մարմնի կողմից ագրոքիմիկատների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում ագրոքիմիկատների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժում է, եթե՝

1) ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները:

10. Ագրոքիմիկատի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել և ագրոքիմիկատի բաղադրությունը՝ սննդատարրերի կազմը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել: Պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին ագրոքիմիկատը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված ագրոքիմիկատի:

Հոդված 6.2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը, փորձարկումը, պետական գրանցման ժամկետը և պետական գրանցումից հանելը

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ և 6.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով պահանջվող փաստաթղթերը պետք է տրամադրված լինեն արտադրողի կողմից:

2. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձարկումն իրականացվում է դրանք պետական գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են հինգ տարի ժամկետով, իսկ ագրոքիմիկատները գրանցվում են տասը տարի ժամկետով, և գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջը տրվում է գրանցման վկայական:

4. Պեստիցիդները և ագրոքիմիկատները պետական գրանցումից հանվում են, եթե՝

1) լրացել է պետական գրանցման ժամկետը, սակայն թույլատրվում է դրանց իրացումը կամ օգտագործումը կամ արտահանումը մինչև պիտանելիության ժամկետի ավարտը.

2) պետական գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից հանելու հայտ.

3) պեստիցիդի ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից և ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

4) գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենսդրությամբ սահմանված պահանջներին կամ կեղծ տեղեկություններ.

5) առկա են պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցումը անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ հիմքեր:»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« **Հոդված 8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումը**

1. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացված պեստիցիդները և ագրոքիմիկատները ենթակա են պարտադիր թունաբանահիգիենիկ գնահատման, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգով պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թունաբանահիգիենիկ գնահատում իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունները:

3. Գոմաղբի, բուսահողի, թռչնաղբի, կենսահումուսի, կենսահեղուկի, տորֆի, կոմպոստների և օրգանական ծագման այլ ագրոքիմիկատների գրանցումը կատարվում է առանց թունաբանահիգիենիկ գնահատման:

4. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացվում է փաստաթղթային և լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա: Ընդ որում, կարող են նաև հիմք ընդունվել

այլ երկրներում իրականացված փորձարկման արդյունքները: Երկրների ցանկը հաստատում է Կառավարությունը:

5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

6. Թունաբանահիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝

1) թունաբանահիգիենիկ գնահատման եզրակացությունների գիտական հիմնավորումը.

2) գնահատող փորձագետների անկախությունը՝ լիազորությունների իրականացման ժամանակ.

3) թունաբանահիգիենիկ գնահատման ամբողջական իրականացումը.

4) հետազոտվող նյութերի գաղտնիության ապահովումը:»:

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեության տեսակներ են:»:

Հոդված 9.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածի 3-րդ մասը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով շարադրվող 6-րդ հոդվածի 11-12-րդ և 6-րդ հոդվածով լրացվող 6.1-ին հոդվածի 11-12-րդ մասերը տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Կ-901-16.08.2024-ՏՏԳԾ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետից հանել «և կենդանիների» բառերը.

2) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«25) պեստիցիդ՝ բույսերի պաշտպանության միջոց, ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է բույսերի հիվանդությունների, որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, չվերամշակված գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերամշակման, փոխադրման, իրացման գործընթացները խոչընդոտող վնասատուների~~) և~~), բույսերի և սնկերի անցանկալի տեսակների տարածման ու զարգացման կանխարգելման կամ ոչնչացման համար: Պեստիցիդների ~~խմբում ներառված~~հիմնական խմբերից են՝ միջատասպանները (ինսեկտիցիդներ), տզասպանները (ակարիցիդներ), կրծողասպանները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մանրէասպանները (բակտերիոցիդներ), նեմատոդասպանները (նեմատոցիդներ), մոլախոտասպանները (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, բույսերի պատվաստանյութերը, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները, ֆումիգանտները~~ և այլն~~.».

3) 28-րդ կետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ և ~~37~~38-րդ կետերը.

«29) **ազդող նյութ՝** պեստիցիդի պատրաստուկային ձևի մեջ առկա կենսաբանորեն ակտիվ բաղադրիչ, որն ապահովում է պեստիցիդի նպատակային օգտագործման արդյունավետությունը.

30) **Ֆերոմոն՝** կենդանի օրգանիզմների ներզատիչ և արտազատիչ գեղձերի գործունեության արգասիք հանդիսացող բուրավետ նյութերի անալոգ սինթետիկ քիմիական պատրաստուկ, որը հանդիսանում է պեստիցիդ և կիրառվում է վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, դրանց տարածումը, զարգացումը կանխարգելելու, նվազեցնելու, ինչպես նաև վնասակար օրգանիզմների զարգացմանը, թռիչքի շարժին հետևելու և դրանց դեմ միջատասպանների կիրառման ժամկետները որոշելու համար: Ֆերոմոնները վնասակար օրգանիզմների կենսաքիմիական պրոցեսների վրա ազդելու փոխարեն խաթարում են վերջիններիս զուգավորման բնական ցիկլը.

31) **դեֆոլիանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որը բույսերի մոտ առաջացնում է արհեստական տերևաթափ: Որոշակի չափաքանակով կիրառման դեպքում բույսերի կենսունակությունը դրանից չի նվազում և գյուղատնտեսության մեջ օգտագործվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով.

32) **դեսիկանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որն արագացնում է մշակաբույսերի հասունացումը, չորացումը, կիրառվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով.

33) **ֆումիգանտ՝** պեստիցիդ հանդիսացող գազային վիճակով քիմիական նյութ, որը կիրառվում է վնասակար օրգանիզմների (միջատների) դեմ պայքար իրականացնելու համար, որը վերջիններիս օրգանիզմ է թափանցում ~~է~~ շնչուղիների միջոցով.

~~34~~34) **վարակազերծում՝** բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների նկատմամբ իրականացվող գործողությունների համալիր, որն ուղղված է կարանտին վնասակար օրգանիզմների ոչնչացմանը.

35) **արտադրող՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրացման նպատակով իրականացնում է բույսերի, բուսական արտադրանքի և այլ

կարգավորվող առարկաների, ինչպես նաև պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն~~ և համարվում է տվյալ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի արտադրության իրավատերը.~~.

~~35~~36) **արտադրական տարածք**՝ արտադրամաս, որտեղ անմիջապես արտադրողի կողմից կամ արտադրողի պատվերով և վերջինիս կողմից սահմանված համապատասխան բաղադրությամբ իրականացվում է պեստիցիդների կամ ագրոքիմիկատների արտադրություն.

~~36~~37) **առևտրային անվանում**՝ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանում, որի ներքո պեստիցիդը կամ ագրոքիմիկատը մակնշվում է, գրանցվում, գովազդվում և օգտագործվում է տվյալ արտադրանքը նույնատիպ ազդող նյութ կամ սննդատարր պարունակող այլ պեստիցիդներից կամ ագրոքիմիկատներից տարբերվող դարձնելու նպատակով.

~~37~~38) **քաղաքականություն մշակող լիազոր մարմին՝** բուսասանիտարիայի ոլորտում քաղաքականություն մշակող պետական կառավարման համակարգի մարմին:»:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետից, 6-րդ հոդվածի 1-ին մասից, 7-րդ հոդվածի 2-րդ մասից, 9-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետից, 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից հանել «կամ հատուկ» բառերը:

Հոդված 3. Օրենքի՝

7) 3-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետում, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 13-րդ հոդվածի 3-րդ մասում, 14-րդ հոդվածի 1-ին մասում, 16-րդ հոդվածի 6-րդ մասում, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերություններում, 6-րդ գլխի վերնագրում, 18-րդ հոդվածի վերնագրում և 2-րդ, 3-րդ մասերում՝ «կարգավորվող այլ առարկաների» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաների» բառերով.

8) 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 9-րդ կետերում, 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերում և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «կարգավորվող առարկաների» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաների» բառերով.

9) 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում՝ «, կարգավորվող առարկաներն» և 23-րդ կետում՝ «, կարգավորվող առարկա» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «և այլ կարգավորվող առարկաներն» և «և այլ կարգավորվող առարկա» բառերով.

10) 13-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «, կարգավորվող առարկաներ» բառերը փոխարինել «և այլ կարգավորվող առարկաներ» բառերով,

11) 14-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «կարգավորվող այլ առարկաներն» բառերը փոխարինել «և այլ կարգավորվող առարկաներն» բառերով.

12) 18-րդ հոդվածի 1-ին մասում «կարգավորվող այլ առարկաները» բառերը փոխարինել «այլ կարգավորվող առարկաները» բառերով:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածում

3) 1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

4) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ կետով՝

«8.2) բուսաբուծության ոլորտում աշխատանքի անվտանգության կանոնների հաստատումը.»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 6. Պեստիցիդների պետական գրանցումը և վերագրանցումը

7. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող պեստիցիդները պարտադիր ենթակա են պետական գրանցման (այսուհետ՝ գրանցում), բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների:

8. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: ~~Պարզեցված~~Կառավարությունը սահմանում է պեստիցիդների պարզեցված ընթացակարգով ~~գրանցումն իրականացվում է Հայաստանի~~

~~Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում:~~ գրանցման իրականացման դեպքերը:

9. Պեստիցիդների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

10. Լիազոր մարմինը պեստիցիդների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

11.Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում ~~Լիազոր~~լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին ~~5~~10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները ~~երկարաձգում~~երկարաձգվում են ~~5~~10 աշխատանքային օրով:

12. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Պեստիցիդների գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը՝

1) պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, համագործիչ և օժանդակ նյութերը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) պեստիցիդի ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը, մշակումների

քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) պեստիցիդի հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը, ջրամբարների ջրում թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում).

4) պեստիցիդի քիմիական փորձաքննության, ազդող նյութի մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների՝ ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը), եթե տվյալ նյութի փորձաքննության մեթոդիկաներով բյուրեղային տիպօրինակն անհրաժեշտ է.

5) պեստիցիդի թունունակությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն).

6) պեստիցիդի ազդեցությունը վերարտադրողականության վրա.

7) պեստիցիդի մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ, տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները.

8) պեստիցիդի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը.

9) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի պիտակի նկարագիրը.

10) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում դրանց երկու տարվա անընդմեջ դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին, որը տրամադրվում է քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ~~հաստատված ցանկում նշված~~ընդունվող իրավական ակտով սահմանված գիտական և կրթական կազմակերպությունների կողմից՝ քաղաքականություն մշակող լիազոր մարմնի ~~կողմից հաստատված~~հաստատած ձևին համապատասխան:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում .

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-4-րդ և 9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կայացնում է տվյալ պեստիցիդը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով տեղեկացնում է հայտատուին:

9. Լիազոր մարմնի կողմից պեստիցիդների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում պեստիցիդների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժվում է, եթե՝

1) պեստիցիդի ազդող նյութը կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները.

3) պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի:

10. Պեստիցիդի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Պեստիցիդները ենթակա են վերագրանցման, եթե՝

~~1)~~ մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել և պեստիցիդի ազդող ~~կամ~~, համագործիչ ~~կամ~~, օժանդակ նյութերի

~~կամ~~բաղադրությունը և դրանց տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել~~.~~: Պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

~~2) մինչև գրանցման ժամկետի լրանալը տեղի է ունեցել պեստիցիդների ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերի կամ դրանց տոկոսային հարաբերությունների փոփոխություն:~~

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին պեստիցիդը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի~~:~~:»:

~~13. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հայտի համաձայն, որին կից ներկայացվում է տեղեկատվություն՝ պեստիցիդների առևտրային անվանման, ազդող նյութի, դրանց տոկոսային հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության և թույլատրելի շեղումների, համագործիչ և օժանդակ նյութերի, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության, պատրաստուկային ձևի, արտադրողի անվանման, հասցեի (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի) վերաբերյալ:~~

~~14. Սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված գրանցման դրույթներին համապատասխան:»:~~

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին և 6.2-րդ հոդվածներով.

«Հոդված 6.1. Ագրոքիմիկատների պետական գրանցումը և վերագրանցումը

5. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են ~~պետական~~ գրանցման ~~(այսուհետ՝ գրանցում),~~. բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված ագրոքիմիկատների:

6. Հայաստանի Հանրապետությունում ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: ~~Պարզեցված~~Կառավարությունը սահմանում է ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով ~~գրանցումն իրականացվում է Կառավարության սահմանած դեպքերում:~~ գրանցման իրականացման դեպքերը:

7. Ագրոքիմիկատների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

8. Լիազոր մարմինը ագրոքիմիկատների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին ~~5~~10 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են ~~5~~10 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ագրոքիմիկատների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

1) ագրոքիմիկատի՝ առևտրային անվանումը, սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝

իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) ագրոքիմիկատի կիրառման եղանակները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային քանակը.

4) ագրոքիմիկատի սննդատարրերի քիմիական փորձաքննության մեթոդիկան.

5) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի.

6) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և գործածության մեջ գտնվող ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում.

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա) սույն հոդվածի 6-րդ մասի 1-3-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ) գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր ~~մարմինն իրականացված~~մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության ~~արդյունքով~~արդյունքում կայացնում է տվյալ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում պատշաճ կերպով տեղեկացվում է հայտատուին:

9. Լիազոր մարմինը մերժում է մարմնի կողմից ագրոքիմիկատների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում ագրոքիմիկատների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժում է, եթե՝

1) ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները:

10. Ագրոքիմիկատի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե՝

1) մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել և ագրոքիմիկատի բաղադրությունը՝ սննդատարրերի կազմը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել: Պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:

2) մինչև գրանցման ժամկետի լրանալը տեղի է ունեցել ագրոքիմիկատների սննդատարրերի կազմի կամ դրանց տոկոսային հարաբերությունների փոփոխություն:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին ագրոքիմիկատը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված ագրոքիմիկատի:

13. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հայտի համաձայն, որին կից ներկայացվում է տեղեկատվություն՝ ագրոքիմիկատների առևտրային անվանման, սննդատարրերի, դրանց տոկոսային

~~հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության և թույլատրելի շեղումների, պատրաստուկային ձևի, արտադրողի անվանման, հասցեի (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի) վերաբերյալ:~~

~~14. Սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում ագրոքիմիկատի վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված գրանցման դրույթներին համապատասխան:~~

Հոդված 6.2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը, փորձարկումը, պետական գրանցման ժամկետը և պետական գրանցումից հանելը

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ և 6.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով պահանջվող փաստաթղթերը պետք է տրամադրված լինեն արտադրողի կողմից:

2. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձարկումն իրականացվում է դրանք պետական գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են հինգ տարի ժամկետով, իսկ ագրոքիմիկատները գրանցվում են տասը տարի ժամկետով, և գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջը տրվում է գրանցման վկայական:

4. Պեստիցիդները և ագրոքիմիկատները պետական գրանցումից հանվում են, եթե՝

1) լրացել է պետական գրանցման ժամկետը, սակայն թույլատրվում է դրանց իրացումը կամ օգտագործումը կամ արտահանումը մինչև պիտանելիության ժամկետի ավարտը.

2) պետական գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից հանելու հայտ.

3) պեստիցիդի ~~կամ ագրոքիմիկատի~~ ազդող կամ համագործիչ~~,~~ կամ օժանդակ նյութերից և ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

4) գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենսդրությամբ սահմանված պահանջներին կամ կեղծ տեղեկություններ.

5) առկա են պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցումը անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ հիմքեր:»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« **Հոդված 8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումը**

1. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացված պեստիցիդները և ագրոքիմիկատները ենթակա են պարտադիր թունաբանահիգիենիկ գնահատման, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգով պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թունաբանահիգիենիկ գնահատում իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունները:

3. Գոմաղբի, բուսահողի, թռչնաղբի, կենսահումուսի, կենսահեղուկի, տորֆի, կոմպոստների և օրգանական ծագման այլ ագրոքիմիկատների գրանցումը ~~կարող~~կատարվում է~~ կատարվել~~ առանց թունաբանահիգիենիկ գնահատման:

4. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացվում է փաստաթղթային և լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա: Ընդ որում, կարող են նաև հիմք ընդունվել այլ երկրներում իրականացված փորձարկման արդյունքները: Երկրների ցանկը հաստատում է Կառավարությունը:

5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը~~:»:~~:

6. Թունաբանահիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝

1) թունաբանահիգիենիկ գնահատման եզրակացությունների գիտական հիմնավորումը.

2) գնահատող փորձագետների անկախությունը՝ լիազորությունների իրականացման ժամանակ.

3) թունաբանահիգիենիկ գնահատման ամբողջական իրականացումը.

4) հետազոտվող նյութերի գաղտնիության ապահովումը:»:

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով ~~.~~՝

«1.1. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեության տեսակներ են:»:

Հոդված 9. ~~Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

2. Սույն օրենքի 6-րդ հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածի 3-րդ մասը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածով շարադրվող 6-րդ հոդվածի 11-~~14~~12-րդ և 6-րդ հոդվածով լրացվող 6.1-ին հոդվածի 11-~~14~~12-րդ մասերը տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-901-16.08.2024-ՏՏԳԾ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
	Կառավարություն	ին հոդված	բույսերի» բառերը փոխարինել «բույսերի և սնկերի» բառերով, «խմբում ներառված են» բառերը փոխարինել «հիմնական խմբերից են՝» բառերով, իսկ պարբերության վերջում՝ «և այլն» բառերը հանել՝ հիմք ընդունելով	Ընդունվել է	Ընդունվել է

			մասնագիտական մոտեցումները և այն հանգամանքը, որ պեստիցիդների խմբերը ավելի բազմազան են և կարող են պարբերաբար համալրվել նորանոր խմբերով, 33-րդ կետում «թափանցում է» բառերը առաջարկում ենք փոխարինել «թափանցում» բառով, 1-ին հոդվածով՝ գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք լրացնել «վարակազերծում» հասկացությունը՝ հաշվի առնելով, որ Օրենքի 18-րդ հոդվածում սահմանված են վարակազերծման վերաբերյալ դրույթներ և նպատակահարմար է սահմանել այդ հասկացության մեկնաբանությունը՝ տարընկալումներից խուսափելու նպատակով: Հաշվի առնելով վերոգրյալը, 33-րդ կետից հետո առաջարկում ենք լրացնել նոր	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			34-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ **վարակազերծում՝** բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների նկատմամբ իրականացվող գործողությունների համալիր, որն ուղղված է կարանտին վնասակար օրգանիզմների ոչնչացմանը.» Ըստ այդմ կետերի համարակալումը վերանայվել է: Առաջարկությամբ պայմանավորված՝ նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետում՝ «և 37-րդ» բառերը փոխարինվել են «, 37-րդ և 38-րդ» բառերով, 1-ին հոդվածով՝ գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 34-րդ՝ (խմբագրված 35-րդ) կետում առաջարկում ենք «արտադրող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է	Ընդունվել է	Ընդունվել է

			պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն և համարվում է տվյալ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի արտադրության իրավատերը.» հասկացությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ **արտադրող՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրացման նպատակով իրականացնում է բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների, ինչպես նաև պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն». հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծով սահմանվող հասկացության համաձայն «արտադրող» է համարվում միայն պեստիցիդի և ագրոքիմիկատի արտադրությամբ զբաղվող անձը, մինչդեռ Օրենքի 13-րդ հոդվածում կիրառվող «արտադրող» բառը վերաբերում է բույսերի,		

			բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, ինչպես նաև՝ պեստիցիդի և ագրոքիմիկատի արտադրությամբ զբաղվող անձանց:		
	Կառավարություն	րդ հոդված	րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 6-րդ հոդվածի րդ մասում՝ Պարզեցված ընթացակարգով գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում:» նախադասությունը հստակեցնելու նպատակով առաջարկում ենք խմբագրել հետևյալ ձևով՝ Կառավարությունը սահմանում է պեստիցիդների պարզեցված ընթացակարգով գրանցման իրականացման դեպքերը»: րդ մասում առաջարկում ենք՝ 1) «կից փաստաթղթերում» բառերը	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			փոխարինել «հայտին կից՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված փաստաթղթերում» բառերով՝ ապահովելով իրավական որոշակիություն և մատնացույց անելով վավերապայմանները, որոնց բացթողումների դեպքում առաջարկվում է հայտատուին շտկել թերությունները: Լիազոր» բառը գրել փոքրատառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի րդ մասի պահանջը: թիվը «փոխարինել 10» թվով, քանի որ փաստաթղթերի շտկման փուլը գործնականում ենթադրում է ավելի երկար ժամանակահատված, քան նախատեսված է նախագծով: Սույն առաջարկների հիման վրա համապատասխան փոփոխություններն առաջարկում ենք կատարել նաև նախագծի 6-րդ հոդվածով լրացվող	Ընդունվել է	Ընդունվել է

			Օրենքի 6.1-ին հոդվածի 5-րդ մասում: 5-րդ հոդվածով՝ նոր խմբագրությամբ շարադրվող գործող օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի 10-րդ կետում՝ «հաստատված ցանկում նշված» բառերը առաջարկում ենք փոխարինել «ընդունվող իրավական ակտով սահմանված» բառերով՝ սույն կետում մեջբերված նորմը որոշակի դարձնելու նպատակով, որը լիազորելու է քաղաքականություն մշակող մարմնին (համապատասխան նախարարությանը)՝ իր կողմից ընդունվող իրավական ակտով (նախարարի հրաման) սահմանել այն գիտական և կրթական կազմակերպությունների ցանկը, որոնց կողմից կարող է տրամադրվել փորձարկման արդյունքների վերաբերյալ տեղեկանքը, միևնույն ժամանակ առաջարկում ենք նախադասության վերջում «կողմից» բառը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

			9-րդ մասի 1-ին պարբերությունը՝ «Լիազոր մարմնի կողմից պեստիցիդների գրանցումը մերժվում է, եթե» նախադասությունը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Լիազոր մարմնի կողմից պեստիցիդների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում պեստիցիդների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժվում է, եթե»: Վերոգրյալ խմբագրությամբ նախատեսվել է իրավակարգավորում՝ պեստիցիդների գրանցման մերժման դեպքում փաստաթղթերի փաթեթի հայտատուին վերադարձնելու վերաբերյալ:	Ընդունվել է	Ընդունվել է
			Առաջարկում ենք համապատասխան փոփոխությունը կատարել նաև նախագծի 6-րդ հոդվածով լրացվող Օրենքի 6.1-ին հոդվածի 9-րդ մասում:	Ընդունվել է	Ընդունվել է

			խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 11-րդ մասի՝ 1) 1-ին կետում առաջարկում ենք «կամ» շաղկապները հանել, հակառակ դեպքում այդ դրույթում նյութերն իրարից «կամ» շաղկապով անջատելուց բխում է, որ նույնիսկ եթե պեստիցիդների ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից կամ դրանց տոկոսային հարաբերություններից բոլորը՝ բացի մեկից փոխվել են, ապա վերագրանցումը հնարավոր է իրականացնել գրանցման ժամկետի լրանալու հիմքով: Մինչդեռ անհրաժեշտ է, որ գրանցման ժամկետի լրանալու դեպքում պեստիցիդների ազդող, համագործիչ և օժանդակ նյութերը և դրանց տոկոսային հարաբերությունները նույնը լինեն՝ վերագրանցում իրականացնելու համար: 2) «օժանդակ նյութերի» բառերից հետո «կամ» շաղկապի փոխարեն լրացնել	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			«բաղադրությունը և» բառերը: 3) Առաջարկում ենք 11-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ «Պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:»: Առաջարկությունը ներկայացվել է՝ մասնագիտական տեսանկյունից՝ հստակեցնելով վերագրանցման դեպքը: համարակալումը հանել, միևնույն ժամանակ 2-րդ կետը առաջարկում ենք հանել, քանի որ մասնագիտական տեսանկյունից վերագրանցում	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			իրականացնելու դեպքը հստակեցվել և շարադրվել է այն համատեքստում, որ վերագրանցումն իրականացվելու է միայն պեստիցիդի բաղադրության անփոփոխ լինելու դեպքում և՛ եթե մինչև գրանցման ժամկետի լրանալը հայտ է ներկայացվում, իսկ եթե պեստիցիդի բաղադրությունը փոփոխվում է կամ գրանցման ժամկետը լրանում է, ըստ էության այն ենթակա է լինում գրանցման, այլ ոչ թե վերագրանցման: Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերը հանել, քանի որ 5-րդ հոդվածով Օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 11-րդ մասում լրամշակվել է պեստիցիդների վերագրանցման դեպքը և վերագրանցում իրականացնելու կարգը,		

			որի համաձայն պարզեցված ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված պեստիցիդների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան: Իսկ պարզեցված ու ընդհանուր ընթացակարգով պեստիցիդների գրանցումն արդեն իսկ ամրագրված է սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում:		
	Կառավարություն	րդ հոդված	ին հոդվածի 1-ին մասից հանել՝ «պետական» և «(այսուհետ՝ գրանցում)» բառերը՝ հաշվի առնելով, որ «պետական գրանցման» եզրույթի կրճատ	Ընդունվել է	Ընդունվել է

			տարբերակն արդեն իսկ նշված է նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 6-րդ հոդվածի 1-ին մասում, միևնույն ժամանակ առաջարկում ենք «բացառությամբ» բառից առաջ դնել «,» կետադրական նշանը:	Ընդունվել է	Ընդունվել է
			2-րդ մասի՝ «Պարզեցված ընթացակարգով գրանցումն իրականացվում է Կառավարության սահմանած դեպքերում:» նախադասությունը հստակեցնելու նպատակով առաջարկում ենք խմբագրել հետևյալ ձևով՝ «Կառավարությունը սահմանում է ագրոքիմիկատների պարզեցված ընթացակարգով գրանցման իրականացման դեպքերը:» հետո լրացնել «հայտին», «կից» բառից	Ընդունվել է	Ընդունվել է

			հետո «՝ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված» բառերը, ինչպես նաև «5» թիվը փոխարինել «10» թվով, քանի որ փաստաթղթերի շտկման փուլը գործնականում ենթադրում է ավելի երկար ժամանակահատված, քան նախատեսված է նախագծով:	Ընդունվել է	Ընդունվել է
			Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող Օրենքի 6.1.-ին հոդվածի 8-րդ մասում՝ մարմինն իրականացված» բառերը փոխարինել «մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում» բառերով՝ հստակեցնելով, որ ՀՀ-ում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու համար լիազոր մարմինն իրականացնում է փաստաթղթերի ուսումնասիրություն:	Ընդունվել է	Ընդունվել է

			Օրենքի 6.1.-ին հոդվածի 9-րդ մասում՝ «Լիազոր մարմինը մերժում է ագրոքիմիկատների գրանցումը եթե՝» բառերի փոխարեն լրացնել Լիազոր մարմնի կողմից ագրոքիմիկատների գրանցումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում ագրոքիմիկատների գրանցման փաթեթը վերադարձվում է հայտատուին: Գրանցումը մերժվում է, եթե»: Վերոգրյալ խմբագրությամբ նախատեսվել է իրավակարգավորում՝ ագրոքիմիկատի գրանցման մերժման դեպքում փաստաթղթերի փաթեթի հայտատուին վերադարձնելու վերաբերյալ: համարակալումը հանել, ինչպես նաև առաջարկում ենք վերագրանցման դեպքի հստակեցման մասով խմբագրել, լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ	Ընդունվել է	Ընդունվել է

			բովանդակությամբ. Պարզեցված ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված պարզեցված ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան, իսկ ընդհանուր ընթացակարգով գրանցված ագրոքիմիկատների դեպքում՝ ընդհանուր ընթացակարգով գրանցման դրույթներին համապատասխան:»: ին հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետը առաջարկում ենք հանել, քանի որ քանի որ մասնագիտական տեսանկյունից վերագրանցում իրականացնելու դեպքը հստակեցվել և շարադրվել է այն համատեքստում, որ վերագրանցումն իրականացվելու է միայն ագրոքիմիկատի բաղադրության անփոփոխ լինելու դեպքում և եթե մինչև	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			գրանցման ժամկետի լրանալը հայտ է ներկայացվում, իսկ եթե ագրոքիմիկատի բաղադրությունը փոփոխվում է կամ գրանցման ժամկետը լրանում է, ըստ էության այն ենթակա է գրանցման, ոչ թե վերագրանցման: Առաջարկում ենք 13-րդ և 14-րդ կետերը հանել, քանի որ 6-րդ հոդվածով լրացվող Օրենքի 6.1.-ին հոդվածի լրամշակված 11-րդ մասում արդեն իսկ սահմանվել է ագրոքիմիկատների վերագրանցման դեպքը և վերագրանցում իրականացնելու կարգը:		
	Կառավարություն	րդ հոդված	օրենքում լրացվող նոր 6.2-րդ հոդվածի վերնագրում «տրամադրումը,» բառից հետո առաջարկում ենք լրացնել «փորձարկումը» բառը, քանի որ սույն հոդվածի 2-րդ մասում տրված է իրավակարգավորում ՀՀ-ում արտադրված պեստիցիդների և	Ընդունվել է	Ընդունվել է

			ագրոքիմիկատների փորձարկումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցների հաշվին իրականացնելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: լրացվող նոր՝ 6.2-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում՝ «պեստիցիդի կամ ագրոքիմիկատի ազդող կամ համագործիչ, կամ օժանդակ նյութերից որևէ մեկը» բառերը փոխարինել «պեստիցիդի ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից և ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը» բառերով՝ հաշվի առնելով նախագծով սահմանվող «ազդող նյութ»	Ընդունվել է	Ընդունվել է

			հասկացությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ագրոքիմիկատներն ունեն սննդատարրեր, ոչ թե համագործիչ կամ օժանդակ նյութեր:		
	Կառավարություն	րդ հոդված	7-րդ հոդվածով խմբագրվող գործող օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում «կարող է կատարվել» բառերը առաջարկում ենք փոխարինել «կատարվում է» բառերով՝ բացառելով նշված գործընթացի իրավակիրարկման հայեցողականությունը և հաշվի առնելով, որ օրգանական ծագման ագրոքիմիկատներն իրենց բնույթով պայմանավորված՝ չեն կարող պարունակել թունավոր ազդող նյութեր, մշակաբույսերի համար ավելի անվտանգ են և բացի այդ, օրգանական ծագման ագրոքիմիկատների նկատմամբ շատ երկրներում, այդ թվում Եվրամիության, թունաբանահիգիենիկ գնահատում չի իրականացվում:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			շարադրվող գործող օրենքի 8-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6-րդ մասով. «6. Թունաբանահիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝ 1) թունաբանահիգիենիկ գնահատման եզրակացությունների գիտական հիմնավորումը. 2) գնահատող փորձագետների անկախությունը՝ լիազորությունների իրականացման ժամանակ. 3) թունաբանահիգիենիկ գնահատման ամբողջական իրականացումը. 4) հետազոտվող նյութերի գաղտնիության ապահովումը:»: Նախագծում լրացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող օրենքում ևս սահմանված են նշված սկզբունքները և նախագծով դրանց		

			բացառման անհրաժեշտությունը բացակայում է:		
	Կառավարություն	րդ հոդված	Հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի», 2. 9-րդ հոդվածի 3-րդ մասում «11-14-րդ» բառերը երկու տեղում էլ փոխարինել «11-12-րդ» բառերով, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ նախագծի 5-րդ հոդվածով շարադրվող՝ 6-րդ հոդվածի և նախագծի 6-րդ հոդվածով շարադրվող 13-14-րդ մասերը հանվել են:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

	Կառավարություն	2-րդ հոդված	1. 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»: 2. 2-րդ հոդվածը խմբագրել՝ «հրապարակման օրվանից 6 ամիս հետո» բառերը փոխարինել «հրապարակումից 8 ամիս հետո» բառերով: Օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է պաշտոնական հրապարակումից 8 ամիս հետո՝ նկատի ունենալով հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:		
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
	Կառավարություն	ին հոդված	1-ին հոդվածով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 18-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «ազդող նյութի, ազդող նյութի պարունակության, պատրաստուկային ձևի» բառերը փոխարինել «պեստիցիդի ազդող նյութի, ազդող նյութի	Ընդունվել է:	Ընդունվել է

			պարունակության, պատրաստուկային ձևի և ագրոքիմիկատի սննդատարրերի, սննդատարրերի պարունակության, պատրաստուկային ձևի» բառերով., իսկ «օրենքի 18-րդ» բառերն առաջարկում ենք հանել, քանի որ հղումը կատարվում է նույն հոդվածի այլ մասերին: դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը,» բառերը փոխարինել «պեստիցիդի ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, ագրոքիմիկատի սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, թույլատրելի շեղումները և		

			պատրաստուկային ձևը,» բառերով: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ազդող նյութ ունեն պեստիցիդները, իսկ ագրոքիմիկատներն ունեն սննդատարրեր, հետևաբար անհրաժեշտ է տարանջատել դրանց բաղադրամասերի հետ կապված իրավակարգավորումները:		
	Կառավարություն	րդ հոդված	Հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի», առաջարկում ենք «իրավական ակտերն» բառերից առաջ լրացնել «ենթաօրենսդրական նորմատիվ» բառերը՝	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը:		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
	Կառավարություն	ին հոդված	1-ին հոդվածում «**հոդվածը**» բառն առաջարկում ենք փոխարինել **«հոդվածի 1-ին մասը»** բառերով՝ հստակեցնելու համար, իսկ «**մասով**» բառը՝ «**կետով**» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
	Կառավարություն	րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:	Ընդունվել է	Ընդունվել է

			3-րդ հոդվածում՝ «հրապարակման օրվանից 6 ամիս հետո» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել Ուժի մեջ մտնելու ժամկետը առաջարկում ենք սահմանել՝ պաշտոնական հրապարակումից 8 ամիս հետո՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասը, համաձայն որի՝ Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ	Ընդունվել է	Ընդունվել է

			օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից:		